Կ

ԿԱՏԱՐԻՆԷ ՂՈՐՂԱՆՈՎ (ՍԱՐԿԱՒԱԴՈՒՀԻ).— Թիֆլիզի Կուսանաց Անապատի կոյսերէն. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, Մովսէսեան Յովհաննէս պտրք.ի օրով, Բ. անգամ 1864ին, և այս առթիւ Ս. Յակոբի վանքին կը նուիրէ 31 հատ ոսկեթել հիւսուածով կարմիր դիպակէ չուրջառներ, և արծաթեայ աշտանակներ և այլն, ինչպէս նաև հէօճէթով կը նը-ուիրէ ձիթաստան մը։ (Ազգպտմ. էջ 4095)։

ԿԱՐԱՊԵՏ ԱԲ.—Մբ. 1407ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Գրիգոր վրդ. Տաթեւացւոյն Հարցմանց գիրքը. ձեռագիրը այժմ կը գտնուի Ս. Էջմիածնի մատենադարանը. (Էջմ. Ցուց. էջ 50. Նշարք, էջ 26)։

ԿԱՐԱՊԵՏ ԱԲ.—Մբ. Զնքուշի վանքին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, 1702ին կը վախճանի հոն. (Օրագրութիւն Ամդեցիին)։

ԿԱՐԱՊԵՏ ԱԲ. ՄՈԿԱՑԻ.— Ս. Յակոբի վանքին կը նուիրէ տպագիր Աստուածաշունչ մը (տպ. 1705, ի Կ. Պոլիս), որուն ձեռագիր մէկ յիշատակարանէն կը հասկցուի թէ՝ 1728ին Կարապետ աբ. Մոկացին կատարած է այս նուիրատուութիւնը։

ԿԱՐԱՊԵՏ ԱԲ. ՋՈՒՂԱՑԵՑԻ. — Լէնկ-Թիմուրի ժամանակ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. վերադարձին Սրծկէի մէջ գերի կը բռնուի նոյն բռնաւորին մարդերէն. Թովմա Մեծոփեցին իր Պատմութեան մէջ (էջ 28) հետեւեալ վկայութիւնը կուտայ սոյն Կարապետ աբ.ի մասին. «եւ անտի չուեալ եկն (Լէնկ-Թիմուր) ի յԱրծկէ. և ի հասանիլն ի դուռն քաղաքին ըմբռնեցին աբեղայ մի Կարապետ անուն ի գեղջէն Ջուղայու, որ գայր յԵրուսաղիմայ. և կապեցին զնա և տարան կապանօք։ Եւ գերեալ քրիստոնէիցն հաստատութիւն եղև հաւատոյ ի Սմրղանտ քաղաքի. եւ եղեւ եպիսկոպոսութիւն յետ